ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2026/2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Կարգավիճակ	Առաջարկության բովանդակությունը	Կցված փաստաթղթեր	Եզրակացություն	Դրույթ
	1	2	3	4	5	6
1	project.email.general_text 18.04.2026 17:57:55		Հարգելի տիկին Անդրեասյան, Խնդրում եմ Ձեզ միջնորդել ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե՝ 2026/2027 ուսումնական տարվա		Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ 2026/2027 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության տեղերը	

			ասպիրանտուրայի ընդունելության տեղերի և դրանց բաշխման նախագծում ներառելու Ե.23.03 - «Շենքերի և կառույցների ճարտարագիտական (էներգետիկ, հիդրավլիկ և այլն) ապահովում» մասնագիտությամբ 1 (մեկ) անվճար (պետության կողմից ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) տեղ՝ առկա ուսուցմամբ: Տեղեկացնում եմ, որ նշված մասնագիտությամբ և «Գազափոխադրման և գազաբաշխման համակարգում գազի		ձևավորելիս, ի թիվս այլ չափանիշների, հիմք է ընդունվել նաև հաստատության (բուհի) գիտական խորհրդի որոշումը, որի հիման վրա բուհերը ձևավորել են իրենց հայտերը և ներկայացրել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե: Ելնելով վերոգրյալից՝ բուհի կողմից չներկայացված հայտերը չեն քննարկվել:	

			քանակական և որակական չափումների մեթոդաբանության մշակումը հաշվի առնելով տեղական պայմանները» թեմայով ՃՇՀԱՀ-ի կողմից նախապես ներկայացվել էր հայտ՝ Սերգեյ Աշոտի Մինասյանի հավանական գիտական ղեկավարությամբ (դիմորդ՝ Աննա Վահանի Սահակյան): Սակայն, պարոն Մինասյանի՝ Միջազգային Գիտական Շտեմարաններում համապատասխան հոդվածների			

			բացակայության պատճառով, տվյալ հայտը չի հաստատվել: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 23.10.2025թ.-ին ԲԿԳԿ-ի կողմից ինձ շնորհվել է թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի իրավունք, ինչպես նաև կարևորելով նշված գիտական թեմայի արդիականությունն ու շարունակականությունը՝ խնդրում եմ թույլատրել կատարել հավանական գիտական ղեկավարի փոփոխություն և վերոնշյալ թեմայով ու մասնագիտությամբ տեղի հայտը ներկայացնել իմ			

			անունով: Կից ներկայացնում եմ գիտական ղեկավարի իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը և թեմայի համառոտագիրը: Հարգանքով՝ ՃՇՀԱՀ, ՋԳՄՕ ամբիոնի դոցենտ տ.գ.թ., Սիրանուշ Էգնատոսյան			
2	project.email.general_text 18.04.2026 17:53:40		Ի՞նչ է հնարավոր անել, եթե հայտը ժամանակին տեղադրվել է գիտկոմի կայքում, սակայն չի հանձնվել բուհին ու հետևաբար չի ներկայացվել բուհի կողմից:		Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ 2026/2027 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության տեղերը ձևավորման հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2025 թվականի հոկտեմբերի 20-	

					ը։Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանված ժամկետից հետո ներկայացված հայտերը չեն ընդունվել։	